

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
25 դեկտեմբերի 2017 թ.
Պետական գրանցման թիվ 12417493

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ ՆԱԽԱԳԱՀ

18 դեկտեմբերի 2017 թ.

N 423-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ՝ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՀԵՏԱԶԳՈՒՄԸ ՎԱՂԱԺԱՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածի 4-րդ մասը՝

Հրամայում եմ

1. Հաստատել՝

1) հարկային մարմին ներկայացվող՝ ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետի հետաձգումը վաղաժամ դադարեցնելու վերաբերյալ հայտարարության ձևը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) մաքսային մարմին ներկայացվող՝ ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետի հետաձգումը վաղաժամ դադարեցնելու վերաբերյալ հայտարարության ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Վ. Հարությունյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ՝ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՀԵՏԱՁԳՈՒՄԸ ՎԱՂԱԺԱՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ		Փաստաթղթի հերթական համարը՝ _____ (ըսացվում է հարկային մարմնի կողմից)	
1. Հարկ վճարողը			
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)			
3. Հարկ վճարողի գտնվելու վայրը (բնակության վայրը)			
4. Հայտարարության ներկայացման ամսաթիվը			
5. Ներմուծման հարկային հայտարարագրի		գործարքի համարը	գործարքի ամսաթիվը (օր, ամիս, տարի)
6. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածի 4-րդ մասը՝ խնդրում եմ ստորև նշված ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծման մասով վաղաժամ դադարեցնել ավելացված արժեքի հարկի գումարների (կամ դրա մի մասի) վճարման ժամկետի հետաձգումը.			
N	ԱԱՀ-ի վճարման ժամկետը հետաձգվածապրանքի ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	ԱԱՀ-ի գումարի չափը (դրամ), որի մասով վաղաժամ դադարեցվում է վճարման ժամկետի հետաձգումը	
Տեղյակ եմ, որ սույն հայտարարությունը ներկայացնելու օրվան հաջորդող օրը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն դադարեցվում է ԱԱՀ-ի գումարի վճարման ժամկետի հետաձգումը (առաջանում է ԱԱՀ-ի վճարման պարտավորություն)՝ հայտարարության 6-րդ կետում նշված ԱԱՀ-ի գումարների չափով: ԱԱՀ-ի այդ գումարները ենթակա են վճարման պետական բյուջե մինչև սույն հայտարարության ներկայացման օրվան հաջորդող տասներորդ օրը ներառյալ:			

Պաշտոնատար
 անձ

ստորագրությունը, անունը, ազգանունը

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ՝ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՀԵՏԱՁԳՈՒՄԸ ՎԱՂԱԺԱՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ		Փաստաթղթի հերթական համարը՝ (ըրացվում է մաքսային մարմնի կողմից)	
1. Հարկ վճարողը			
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)			
3. Հարկ վճարողի գտնվելու վայրը (բնակության վայրը)			
4. Հայտարարության ներկայացման ամսաթիվը		թ.	
5. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածի 4-րդ մասը՝ խնդրում եմ վաղաժամ դադարեցնել ստորև նշված մաքսային հայտարարագրերով ներմուծված ապրանքների մասով ավելացված արժեքի հարկի գումարների (կամ դրա մի մասի) վճարման ժամկետի հետաձգումը.			
N	1) մաքսային հայտարարագրի		2) ԱԱՀ-ի գումարի չափը
ա. ամսաթիվը (օր, ամիս, տարի)	բ. համարը	գ. ԱՏԳ ԱԱ ծածկագիրը (այն ապրանքների մասով, որոնց դեպքում ԱԱՀ վճարման ժամկետը հետաձգվել է)	(դրամ), որի մասով վաղաժամ դադարեցվում է վճարման ժամկետի հետաձգումը
Տեղյակ եմ, որ սույն հայտարարությունը ներկայացնելու օրվան հաջորդող օրը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն դադարեցվում է ԱԱՀ-ի գումարի վճարման ժամկետի հետաձգումը (առաջանում է ԱԱՀ-ի վճարման պարտավորություն)՝ հայտարարության 5-րդ կետում նշված ԱԱՀ-ի գումարների չափով: ԱԱՀ-ի այդ գումարները ենթակա են վճարման պետական բյուջե մինչև սույն հայտարարության ներկայացման օրվան հաջորդող տասներորդ օրը ներառյալ:			

Պաշտոնատար _____
 անձ ստորագրությունը, անունը, ազգանունը